ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՓԱՌՔԸ

Գրեց՝ ՊՐՈՖ. Ն. ԱՏՈՆՑ

IV

ՍՄԲԱՏ, Աշոտի որդին, պատանդ էր արաբ տիրապետի մօտ, դարձաւ 826 թուին եւ ստանձնեց հօր դերը:

Հին թշնամիները նորէն դլուխ էին բարձրացրել: Զահապի որդի Սեւադան էր, յաւակնոտ ու փառատենչ, որ ուզում էր վերականդնել իր խախտուած դրութիւնը: Նա կըռուի է բռնուել Սմբատի հետ եւ դործը վերջացրել հաշտութեամբ:

«Խաղաղութիւն արարեալ ընդ Սեւադայի, — ասում է պատմագիրը Սմբատի համար, — առնու ի նմանէ զպատիւն հայրենի սպարապետութեան»:

Ուրիշ պատմիչ վկայում է, որ Սեւադան վերադարձել էր Բագրատունեաց. «Առեալ էր զԱրուսեակ ի Բագրատունի տանէ եւ ի ձեռն այնորիկ դյոլով մասն երկրիս բռնակալեալ սեփականաբար իմն տիրէր»:

Համադրելով այս երկու տեղեկութիւնը, կարելի է դալ այն եզրակացութեան, որ զինական ընդհարում էր եղել Սմբատի եւ Սեւադայի միջեւ, յետոյ հաշտութիւն կնքուել, ըստ որում Սմբատ տուել էր իր հակառակորդին իշխանուհի Արուսեակին կնութեան, իսկ Սեւադայ իր կողմից զիջել էր Սմբատին սպարապետութեան պատիւը, որի վրայ աչք էր ունեցել:

Այնուհետեւ Սմբատ եւ Սեւադայ միասին, օգնական ունենալով նաեւ Սիւնեաց Սահակ իշխանին ըմբոստանում են նորեկ ոստիկանի դէմ: Սրան մեր պատմագիրները կոչում են Հաւլ, որ արաբերէն նշանակում է սարսափ եւ թերեւս ժողովրդական վերադիր անուն է, տրուած Խալիդ իբն Եզիդ Շայբանի ոստիկանին, չիշտելու նրա դաժան բնաւորութիւնը:

Յովհ. կաթողիկոս ասում է՝ «Սեւադայ ընդվզեալ եւ խանդացեալ ընդ ոստիկանին Հաւլայ»:

Ասել է թէ Սեւադան ինքն էր ձգտում ոստիկանութեան պաշտօնին ընդդէմ Հաւլի:

Սմբատի եւ Սահակի զինակցութիւնը նրա հետ ցոյց է տալիս, որ սրանք եւս դերադասում էին արդէն ընտանեցած Սեւադայի թեկնածութիւնը: Հայաստանի սահմանագլխին հաստատուած Շայբանի հզօր տունը անհամեմատ աւելի վտանդաւոր էր հայերի համար, մանաւանդ երբ դալիս էր ոստիկանական լիազօրութեամբ արտօնուած:

Խալիդ Շայբանի փորձեց նախ զինափաթ անել ապստամբներին խաղաղ միջոցով, դիմելով Դաւիթ կաթողիկոսի միջնորդութեան: Նրանք չանսացին: Այն ժամանակ Խալիդ յարձակուեց նրանց վրայ եւ յաղթեց, կռուի բռնելով Հրազդանի ափին Կաւակերտ գիւղի մօտ: Սահակ իշխանը մնաց կռուի դաշտում, իսկ Սմբատ եւ Սեւադա փախան եւ ազատուեցան (Յովհ. կթղ. էջ 64):

Վարդան պատմում է, որ Աշոտից յետոյ «առնու զիշխանութիւնն Սմբատ որդի նորա ամ մի եւ ապա մարտուցեալ ընդ չորից հազարաց հինդ հարիւր արամբ, պսակի ի Քրիստոս յիսմայէլականաց» (էջ 79):

Կաթողիկոսի ասելով՝ Խալիդ ունէր ընդամէնը երկու հազար հոգի, մինչդեռ Վարդան կրկնապատկում է եւ տալիս է նաեւ Սմբատի զօրքի թիւը:

Հաւանական է, որ այս տեղեկութիւնը քաղել է Շապուհ Բագրատունուց, բայց անուշադրութեամբ Սահակի մահը վերագրել է Սմբատին, եթէ միայն պատահմամբ ընկած չէ Սահակի անունը՝ փոխանակ «պսակի Սահակ ի Քրիստոս», որ նուազ ընդունելի է, քան որ ուրիշ անդամ Վարդան կրկնում է նոյնը («մեռան Սմբատ եւ Սահակ», էջ 80):

Կարեւորն այն է այս տեղեկութեան մէջ, որ Կաւակերտի կռիւը տեղի է ունեցել Սմբատի իշխանութեան երկրորդ տարին, ուրեմն 828 թուին, որովհետեւ պատանդութիւնից դարձել էր 826 թուին: